

ԱՐԳԵՆՏԻՆԱՅԻ ՆԱՄԱԿԱՆԻ

ԲՐՈՒՅԵՆՈՍ-ԱՅԹԵՍ. — Նախկին տարիների նման այս հոկտեմբերի 10-ին էլ Բուենոս-Այրեսում, «Հայ Կեդրոն»ի սրահում պանծացվեց Հայ մշակույթի տոնը, որին նախաձեռնել էր Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու Երիտասարդաց կազմակերպությունը և հովանավորում էր Հայրապետական պատվիրակ գերազնորհ Սիոն եպիսկոպոս Մանուկյանը: Մեր ժողովորդի դարավոր լուսափայլ մշակույթի գնահատող և հարգող հայրենասեր Հոծ բազմությունը լցվել էր սրահը: Հայաստանյայց առաքելական Եկեղեցու Հոգեբարձրության Կենտրոնական վարչության ժրաջան քարտուղար պարոն Լևոն Տեր Ավետիսյանը կարդաց բացման խոսք՝ կարճ ու կուռ և վարեց հայտագիրը: Գեղարվեստական բաժնին հայրենաշունչ գեղեցիկ երգերով մասնակցում են «Կոմիտաս» երգչախումբն ու «Դիտերը Վարդանանց»ը: Հայրենական լավորակ արտասանություններով ծափերի են արժանանում օրիորդ Անահիտ Օլմեսեկյանը և պարոն Գ. Նահապետյանը: Աննման Սիլվիա Շիրակյանը պանծացնում է սովետահայ բանաստեղծների հայ մշակույթին և լեզվին ծոված ընտանի ստեղծագործություններ: Օրիորդ Սուզան Հյուսվանոսյանը՝ ասմունքի արվեստագիտ, սպանական մեկնությամբ ապրեցնում է Հոգեշնորհ Հ. Վարդապետ Մուշյանի մՄայրը»: Օրիորդ Ալիս Միխիթարյանը գրավոր խնամված մի ճառով նոր սերնդի հարգանքն է բերում հայ մշակույթին: Նոր դպրապետ պարոն Վահան Գալֆայանը մի խորիմաստ բանախոսությամբ տվեց հայ գրերի գյուտի պատմությունը և խոսելով ազգապահպանման մասին՝ շինիլ թելադրություններ արեց ծնողաց և երիտասարդներին, որպեսզի ուշադիր լինեն և սիրեն հայ մշակույթին ու ծաղկուն Հայրենիքը:

Պարոն Գալֆայանի մասին նախկին մի թղթակցությամբ համեստ մի ծանոթություն տվել եմ: Նրա այս առաջին հրապարակային բանախոսությունը, այն էլ հայ մշակույթի նման կարենոր նյութի շուրջը, ունկնդիր հասարակության վրա ձգել է լավ տպագործելուն: Գիտակից ժողովուրդը սիրում և քաշալերում է այն մտավորականներին և գնահատում այն պաշտոնյաններին, որոնց սրտում հայրենասիրական շերմ զգացումների հուրն է վառվում: Ամենից վերջ բանախոսեց գերազնորհ Սիոն եպիսկոպոս Մանուկյանը, որն իրեն հատուկ պերճախոսությամբ պահագրեց հայ մշակույթին ու Սուրբ Թարգմանչաց հիշատակը:

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՑՑԱՅՑ ԱՌԱՔԵՑԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ  
ՏԻԿԱՆԱՑՑ ՀԱՆԴԵՍԱԾ.— Հայաստանյաց Ա-  
ռաքելական ԵԿԵՂԵՑՈՒ ՄԻԿԱՆԱՆԳ ՄԻՈՂԵՐ-  
ՆՔ ԿԱՏԱՐԵՑ ՄԻ ԳԵՂԵՑԻԿ ՀԱՆԴԵՍ ՀՈՂԵՑՄ-  
ԲՔԵՐ 23-Ի ՉԱԲԱԹ ԳԻշեր։ Հանդեսը բաղկա-  
նում էր երկու մասից — ներկայացում՝ և  
ընտանեկան պար։ Թատերական բաժնում  
պարոն Հ. Կոչկարյանի ղեկավարով թյամբ  
բեմադրվեց մի ողբերգություն՝ «Մարի Մատ-  
լեն», երեք արարող, Հեղինակով թյուն Ժ.  
Արիստակյանի։ Սիրող դերակատարները  
ճիգ չեին խնայել նպաստելու համար բեմա-  
դրության հաջողության։ Եկ պիտի ասել,  
թե նրանք հաջող էին։ Ժողովուրդը գոհ  
մնաց, Արժե հիշել նրանց անոնմները և  
շնորհավորել իրենց ծառայության համար։  
Մարթայի դերում՝ տիկին ժանետ Կոչկար-  
յան, Ալեք՝ պարոն Պովլ Բանոցես (հույն և  
մաքուր հայախոս), Վերժին՝ օրիորդ Ալ. Թո-  
րոսյան, Մարի Մատլեն՝ տիկին Լուսին Ա-  
պոհայաթյան (խաղի հերոսուհին), Վելլի  
Մատոն՝ պարոն Հ. Գունտաքճյան, Սամվել՝  
պարոն Կոչկարյան, Պատրիկ՝ Վարդգես Ար-  
քունի։ Հուշարար՝ տիկին Մանուչակ Սիմոն-  
յան և բեմավար՝ տիկին Անթառամ Ահարոն-  
յան։

Ընտանեկան պարն սկսելե առաջ սրբազն հայրը գնահատեց Եկեղեցասեր տիկնանց միությունն ու անդամություններին, որոնք նոր ոժեր լինելով կարող են օգտակար լինել հայկական ձեռնարկներին իրենց գնահատելի մասնակցություններով։ Մայրաքաղաքիս երկու նշանավոր օրկեստրների նվազագածությամբ ընտանեկան պարը տևեց կես գիշերն անց։ Բուժքետին սպասարկում էին Տիկնանց միության անդամությունները։ Հանդեսը արդյունավոր էր նաև նյութական հասուլումն ի նպաստ եկեղեցիին։

«ՄԱՍԻՆԵՐ» ԱՄՄԱՎՃՐԻ ՀԱՆԴԵՍԸ. — Ավելի  
ճիշտ կըներ ասել՝ օրիորդ Մերի ՃՈՐՃԱԼ-  
յանի նվագահանդեսը ի նպաստ «Մասիս»  
մանկական ամսաթերթին. «Մասիս»ը մի  
քանի տարի է հրատարակվում է Հայաստան-  
յաց եկեղեցվոր Կենտրոնական վարչության  
հովանափորությամբ՝ հայ մանուկների ու  
պատանիների համար Այն օրից, որ Կեն-  
տրոնական վարչությունը մի խելացի կար-  
գագրությամբ խմբագրությունը հանձնել է  
հոգեշնորհ Հարություն վարդապետ Մուշյա-  
նին, ամսաթերթը դարձել է սիրուն, գեղե-  
ցիկ և իմաստալից հրատարակություն. նա  
շատ է սիրվել նոր սերնդի կողմից: Բազմա-  
ցել են ընթերցողները և աճել է աշխատա-  
կիցների թիվը հատկապես դպրոցական ա-  
շակերտների շարքերում, որոնց լավ հայե-

րեն շարադրությունները լուս են տեսնում ամսագրում: Օրիորդ Մերի Ճորժալյանը Արդեհնտինահայ նոր սերնդից ընտիր և փայլուն ապագայով մի փիանիստ է: Նրա անցյալ տարվա կոնցերտը հմայել էր ժողովրդին: Հոկտեմբերի 30-ի նվազահանդեսը ավելի խորացրեց մեր հավատը, թե դաշնակարուհի Ճորժալյանը սկսել է Հաղթական քայլով բարձրանալ նվագի նրբին արվեստի աստիճաններից դեպի վեր, դեպի կատարելություն տանող հանդրվան: Երիտասարդ փիանիստի մոտ ընդգծելի առաքինությունն այն է, որ նա սիրում է հայ երգը, նվագն ու մշակութը և անշահախնդրաբար ու նվիրվածորեն ծառայում է նրանց:

Հանդեսն սկսում է հայտարարված ժամին: Հայկական նվագը սիրող ընտրանի բազմությունը լոիկ-մնջիկ հետևում է ածուներին և հիանում է ճկում մատների հպումներից հոսող եղանակների վրա՝ թարխուդարյանի «Նազպար»ը, Սպենդիարյանի «Հիշապիյան», «Ղայթարման», Խաչատրյանի «Գայանե» բալետից «Օրորար», «Երիտասարդների պար», «Լեզգինկամ», «Սպարտակը» և այլն:

Սքանչելի բացման խոսքում խմբագրության անունից պարոն ն. Մարլանը գրագոր ճառով «Մասիս»ի շորս տարվա պատմականն է անում՝ հրավիրելով հասարակությանը օժանդակել նրա անխափան հրատարակմանը, գնահատում է հայր Հ. Վարդապետ Մուշյանի խմբագրական կարողությունն և հատուկ հոգածությունը դեպի նոր սերունդը:

Օրիորդ Ա. Մխիթարյանը նույնպիսի զգացումներ է հայտնում սպաններին լեզվով: Պարոն Մ. Ֆ. Տել Գալրիլ, օրիորդ Մ. Ճորժալյանի նվագի պրոֆեսորը դասախոսում է «Հայ երգը» նյութին շորքը: Հարգելի պրոֆեսորը մեծապես գնահատելով հայ երաժշտությունը, հոշակավոր երգահանների շարքում հիշատակում և խոնարհվում է Արամ Խաչատրյանի ստեղծագործությունների առաջ, որոնք հայտարարում չեն, թե հայկական են և միշտագայնորեն անմահ:

ԱՐԳԵՆՏԻՆԱՅԻ ԿՐՈՆԻՑ ՏՆՈՐԵՆԸ Ա. ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԵԿԵՂԵՑՈՒՄ.— Հայաստանյաց Առաքելական Եկեղեցու Կրոնական վարչության հրավերով, Հոկտեմբերի 31-ի կիրակի առավոտյան Ա. Գրիգոր Լուսավորիչ Մայր Եկեղեցին այցելեց Արգենտինայի կառավա-

րության Կրոնական գործերի ընդհանուր անօրեն դոկտ. Լեռնարդո է. Բենիտես ղե Ալմադան, որի ներկայությանը կատարվեց հատուկ սովոր պատարագ «Կոմիտաս» երգչախմբի մասնակցությամբ: Սիոն եպիսկոպոս Մանուկյանը խոսեցավ մի կուռ քարոզ, հայ ժողովրդի երախտիքն հայտնեց Արգենտինայի հոգատար կառավարության, օրհնեց Վահեմաշուր Նախագահ և. Տ. Փերոնին, պետական պաշտոնության ու ժողովրդի հայության ու ժողովրդին:

Հավարտ պատարագի հարգելի հյուրը՝ սրբազն հոր, հայր Հարությունյանի, ատենապետ պարոն Ա. Պերկամալիի, գանձապահ պարոն Գ. Սարաֆյանի և այլ վարչականների ընկերակցությամբ անցավ առաջնորդարան, ուր տեղի ունեցավ սիրալիր խոսակցություն:

**ՀԱՅՐԵՆԻՔԻ ՏՈՆԸ.**— Հայ ժողովրդի աղասագրության տարեղարձի փառահեղ տոնը կատարելու համար նախապատրաստական աշխատանքի սկսել են հայրենասեր երիտասարդական կազմակերպությունները: Մեր տղաքն ասում են՝ այս տարի պիտի գերազանցի նախկինները: Նրանք ասում են և կանեն լավագույնը, որովհետև վստահ գիտեն, թե ժողովուրդն ամեն նոյեմբերի 29-ին բուռն խանդակառություն է զգում դեպի առաջադեմ և լուսապայծառ Մայր Հայրենիքը՝ Սովետական Հայաստան:

**ԵՐԳՉՈՒԵՀԻ ԶԱՐՈՒԵՀԻ ԴՈՂՈՒԵԱՅԱՅՆՑԱՆ.**— Համաձայն Արգենտինա-ՍՍՌՄ ինստիտուտի հավաստիացումներին, այս ամսին Բուենոս-Այրես ժամանելու է Սովետահայ անվանի երգչուհի Զարուհի Դոլովսանյանը: Մեր հայրենասեր գաղութը ոգերորդությամբ է իմացել այս ուրախառիթ լուրը և ծրագրում է արժանավայել ընդունելություն անել նրան:

**ՀԱՅՐԵՆԻՑ ԵՐԿՐԻՆ ՄԵԴԸ.**— Սիոն եպիսկոպոս Մանուկյանի այս գիրքը լուս է ընծայել Հայաստանյաց Եկեղեցվոր Երիտասարդական կազմակերպությունը: Պատկերազարդ, մաքուր թուղթ և գեղեցիկ տպագրություն: «Հայրենի երկրին մեջ» գրքում իր խանդակառ տպագրությունը հայտնի հարգելի և սիրած առաջնորդը, որը ուղևորություն կատարեց վերջին ի Մայր Հայաստան և Սուրբ Էջմիածին:

ԹՊՄԱԿԻՑ  
(Եյու-Յորք, «ԺԱՐԱԲԵՐ» Երկօրյա թեր, 20 նոյեմբերի 1954 թ., № 56)

